ՀՐԱՎԵՐ N Տ 1

01.10.2019թ.

2019թ. հոկտեմբերի 1-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ԻՀԱ, պաշտոնական կայքում (www.armla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի վերջնական արտաքին բովանդակային (ծրագրային) գնահատում:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, Գնման առարկայի գինը, պատրաստման ժամկետը և որակի մասին տեղեկությունները:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտ
2. Հայտարարություն

Մրցույթի հաղթող կճանաչվի այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը կներկայացնի ամենացածր գնով, սեղմ ժամկետներում և պահանջվող որակով Գնման առարկայի պատրաստման հայտ:

Խնդրվում է հաշվի առնել, որ արտաքին ծրագրային գնահատման համար նախատեսված վճարումը պետք է կատարվի Եվրոպական միության օժանդակությամբ և ազատված են ԱԱՀ-ից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոհամայնքի միջև կնքված 2006 թվականի ապրիլի 4-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից և 2009թ-ի սեպտեմբերի 23-ին ընդունված 1112-Ն որոշման և նրա հավելվածի:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2019թ.-ի հոկտեմբերի 18-ը, Հայաստանի ժամանակով՝ ժամը 17:00-ը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ԻՀԱ գնման հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով 010 580298 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են 2019թ. հոկտեմբերի 20-ին, ժամը 16:00-ին:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով ծրագրային կայքը հետևյալ հասցեով ccd.armla.am:

Հարգանքով՝

Կարեն Զաղոյան